ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1994-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021 թվականի N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1994-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 և 2007 թվականի հունիսի 21-ի N 819-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին N 1994-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգում (այսուհետ՝ կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) կարգի 22-րդ կետի սեփականության իրավունքով ձեռք բերվող ավտոբուսների ընդհանուր արժեքի 100 տոկոս գումարի չափով երաշխիք՝ համաձայն N 13 ձևի, բառերը հանել.

2) կարգը լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 22.1 կետով.

22.1. Սույն կարգի 22-րդ կետով նախատեսված դեպքում, կազմակերպությունը երթուղային ցանցը կազմակերպող մարմնի տրամադրած հաշվեհամարին է փոխանցում երթուղիները սպասարկելու մրցույթ անցկացնելու մասին հայտարարությամբ սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 1,5 տոկոսին համարժեք գումար (այսուհետ՝ գումար), որը երթուղային ցանցը կազմակերպող մարմնի հետ

սպասարկման պայմանագիր կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցվում է N 12 ձև-ում նշված հաշվեհամարին:

Գումարը երթուղային ցանցը կազմակերպող մարմնի տրամադրած հաշվեհամարին պետք է փոխանցվի մինչև սույն կարգի 34-րդ կետով սահմանված ժամկետը:

Մրցույթին մասնակցելու իրավունք չստացած կամ մրցույթը չհաղթող կազմակերպությունների գումարը փոխանցվում է N 12 ձև-ում նշված հաշվեհամարին մրցույթի ամփոփիչ նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:.

3) կարգի 41-րդ կետի աղյուսակի ԱՎՏՈԲՈՒՍ բաժնի 2-րդ կետում 2 թիվը փոխարինել 3 թվով.

4) կարգի Ձև 12-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Ձև N 12

Հ Ա Յ Տ - Պ Ա Ր Տ Ա Վ Ո Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Հայտատու _____

(կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը),

գտնվելու վայրը (բնակության վայրը), հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Խնդրում եմ թույլատրել մասնակցելու 20 թ. ---------- կայանալիք ավտոբուսային

_____ մրցույթին:

(երթուղու (երթուղիների) անվանումը, համարը)

Պարտավորվում եմ ըստ երթուղային ցանցը կազմակերպող մարմնի հետ կնքված ժամ
բերել երթուղիները սպասարկելու մրցույթ անցկացնելու մասին հայտարարությամբ սա
քանակով ավտոբուսներ:

1. Ավտոբուսների մասին տվյալները՝

NN ը/կ	Մակնիշ	Թողարկման տարեթիվ	Քան
1.			
2.			
3.			

2. Լրացուցիչ տեղեկություններ՝ _____

_____

Նախապես ծանոթացել եմ Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային տրանսպ

բնագավառի օրենսդրության պահանջներին և պարտավորվում եմ դրանք կատարե

Համաձայն եմ երթուղային ցանցը կազմակերպող մարմնի ծանուցումները որպես

պաշտոնական ծանուցում ստանալ իմ ներկայացրած էլեկտրոնային հասցեով:

Գումարի փոխանցումը խնդրում եմ կատարել ---------- հաշվեհամարին:

Կից ներկայացնում եմ.

Ավտոբուսներ արտադրող գործարանի պաշտոնական ներկայացուցչի տրամադրած

ավտոբուսների տեխնիկական բնութագրի և գնի վերաբերյալ տեղեկություն, ինչպես

մատակարարման ժամկետները սահմանող փաստաթուղթ:

Ներկայացված փաստաթղթերի իսկությունը հավաստում եմ:

Հայտատու _____ _____

(ստորագրությունը) (անուն, ազգանունը)

_____ _____ 20 թ.

5) ուժը կորցրած ճանաչել կարգի ՁԼ 13-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից: